ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/185

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/11711-2020 գրությամբ Ա/Ձ Արսեն Գրիգորյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 04.08.2020թ. թիվ 04/31.2/19914-20 գրության հիման վրա 13.08.2020թ. թիվ 26/26-1/11711-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արսեն Գրիգորյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արսեն Գրիգորյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արսեն Գրիգորյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ա/Ձ Արսեն Գրիգորյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/185 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 10:10-ին և 04.09.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.08.2020թ. թիվ 04/31.2/19914-20 գրությամբ հայտնել է, որ նախարարության կողմից 2020 թվականի հուլիսի 6-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/106» ծածկագրով կազմակերպված ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացին հայտ է ներկայացրել Ա/Ձ Արսեն Գրիգորյանը և ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերջինիս 20.07.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգով (հետայսու նաև՝ Համակարգ) և էլեկտրոնային փոստով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը, սակայն Ա/Ձ Արսեն Գրիգորյանը 30.07.2020թ. էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքելուց և Համակարգով մերժել է պայմանագրի շնորհումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Մասնակցի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/185 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 10:10-ին և 04.09.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/185 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/185 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/106» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արսեն Գրիգորյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Արսեն Գրիգորյանը ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ա/Ձ Արսեն Գրիգորյանին 20.07.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով օրենքով սահմանված կարգով շնորհվել է պայմանագիր:

4. Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ա/Ձ Արսեն Գրիգորյանը www.armeps.am կայքի միջոցով 30.07.2020թ. մերժել է իրեն ներկայացված առաջարկը և նաև այդ մասին ծանուցել էլ. փոստով:

5. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/11711-2020 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 04.08.2020թ. թիվ 04/31.2/19914-20 գրությունը՝ կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպես՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/106» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արսեն Գրիգորյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Արսեն Գրիգորյանը ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ա/Ձ Արսեն Գրիգորյանին 20.07.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը՝ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով օրենքով սահմանված կարգով շնորհվել է պայմանագիր:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ա/Ձ Արսեն Գրիգորյանը www.armeps.am կայքի միջոցով 30.07.2020թ. մերժել է իրեն ներկայացված առաջարկը և նաև այդ մասին ծանուցել էլ. փոստով:

Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 20.07.2020թ. Համակարգի և էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ա/Ձ Արսեն Գրիգորյանին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, մինչդեռ վերջինս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 29.07.2020թ. թիվ 2 գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է ստորագրել «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/106» ծածկագրով պայմանագիրը և խնդրել չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նման պայմաններում, գտնում եմ, որ Ա/Ձ Արսեն Գրիգորյանը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ա/Ձ Արսեն Գրիգորյանը՝ որպես ընտրված մասնակից, 29.07.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիրը ստորագրելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/11711-2020 գրությամբ Ա/Ձ Արսեն Գրիգորյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արսեն Գրիգորյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**